ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024Թ. ԲՅՈՒՋԵԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հրազդան համայնքի ավագանու 07 դեկտեմբերի 2023 թվականի N 215-Ն որոշմամբ հաստատված 2024 թվականի բյուջեն եկամտային մասով հաստատվել է 3867533.6 հազար դրամ, որը տարվա ընթացքում ենթարկվելով փոփոխության՝ կազմել է 3935054.0 հազար դրամ (ճշտված բյուջե):

Ճշտված պլանի նկատմամբ փաստացի կատարողականը կազմել է 3326125.9 հազար դրամ կամ բյուջեն կատարվել է 84.53%:

Հաշվետու տարում բյուջեի հավաքագրած եկամուտների 44.7%-ը ապահովվել է սեփական եկամուտների հաշվին, իսկ 55.3%-ը՝ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և նպատակային հատկացումների հաշվին:

1. Գույքային հարկեր անշարժ գույքից եկամտի հաշվին համայնքի բյուջեն համալրվել է 184011,7 հազար դրամով, որը կազմել է բյուջեի եկամուտների 5,5 %-ը: Գույքային հարկեր անշարժ գույքից եկամտի մեջ ներառված՝

- ✓ հողի հարկի գումարը (ֆիզիկական և իրավաբանական անձանցից) կազմել է 26472,4 հազար դրամ՝ գերակատարվելով 16677,4 հազար դրամով
- ✓ գույքահարկ շենք-շինությունների համար (ֆիզիկական և իրավաբանական անձանցից) կազմել է 13111.1 հազար դրամ՝ գերակատարվելով 3861.1 հազար դրամով
- ✓ անշարժ գույքի միասնական հարկը կազմել է 144428.2 հազար դրամ՝ գերակատարվելով 2682.7 հազար դրամով:

2. Գույքային հարկեր այլ գույքից եկամտի հաշվին համայնքի բյուջեն համալրվել է 367570,4 հազար դրամով՝ ապահովելով բյուջեի եկամուտների 11,1 %-ը:
3. Տուրքերի հաշվին համայնքի բյուջեն հաշվետու տարում համալրվել է 87021,2 հազար դրամով՝ ապահովելով բյուջեի եկամուտների 2,6%-ը:
4. Տեղական վճարների հաշվին համայնքի բյուջեն հաշվետու տարում համալրվել է 267829,6 հազար դրամով՝ ապահովելով համայնքի բյուջեի եկամուտների 8,1%-ը:
5. Գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին համայնքի բյուջեն հաշվետու տարում համալրվել է 40953,5 հազար դրամով՝ ապահովելով համայնքի բյուջեի եկամուտների 1,2%-ը:
6. Պաշտոնական դրամաշնորհների և պետության կողմից ՏԻՄ-ներին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետբյուջեից ստացված միջոցների հաշվին համայնքի բյուջեն հաշվետու տարում համալրվել է 1838384,5 հազար դրամով՝ կատարվելով 55,3%-ով:
7. Այլ եկամուտների և մուտքեր տույժերից և տուգանքներից հաշվին համայնքի բյուջեն հաշվետու տարում համալրվել է 76192,9 հազար դրամով, որը կազմել է բյուջեի եկամուտների 2,3 %-ը:
8. Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի հաշվին համայնքի բյուջեն հաշվետու տարում համալրվել է 222398.4 հազար դրամով՝ ապահովելով բյուջեի եկամուտների 6,7 %-ը:
9. Բյուջեի 2024 թվականի տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 241763.8 հազար դրամ, որը կազմել է բյուջեի եկամուտների 7,2%-ը:

2024 թվականի բյուջեն ծախսային մասով հաստատվել է 3867533,7 դրամ, որը տարվա ընթացքում ենթարկվելով փոփոխության՝ կազմել է 3935054,0 դրամ (ճշտված բյուջե): Փաստացի կատարողականը կազմել է 3185741,6 հազար դրամ կամ ճշտված պլանի նկատմամբ կազմել է 80,96 % կամ նախատեսված ծախսերից պակաս է կատարվել 749312,4 հազար դրամ:

Ընթացիկ ծախսերից աշխատանքի վարձատրության հոդվածին է հատկացվել ընթացիկ ծախսերի 18,8%-ը, որը կազմում է 604676,2 հազար դրամ, ծառայությունների և ապրանքների ձեռքբերմանը (էներգետիկ ծառայություն, կոմունալ ծառայություն, կապի ծառայություն, ապահովագրական ծախսեր, պայմանագրային և մասնագիտական ծառայությունների ձեռքբերում, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում, նյութերի ձեռքբերում) հատկացվել է 286124,2 հազար դրամ, որը կազմում է ընթացիկ ծախսերի 8,7%-ը, համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին սուբսիդիաների տեսքով հատկացվել է բյուջեի եկամուտների 39,8%-ը, որը կազմում է 1238280,6 հազար դրամ, որպես դրամաշնորհ՝ հատկացվել է 57643,5 հազար դրամ, որը կազմում է ընթացիկ ծախսերի 1,8%-ը: Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ հոդվածին հատկացվել է 37683,0 հազար դրամ, որը կազմում է ընթացիկ ծախսերի 1,1%-ը, այլ ծախսերին է հատկացվել ընթացիկ ծախսերի 0,5%-ը՝ 17617,9 հազար դրամ: Հաշվետու տարում համայնքային բյուջեի ծախսերի 29,4%-ը կամ 943716,2 հազար դրամ հատկացվել է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը:

Ընդհանուր ծախսերի կատարման իրական պատկերը ստանալու համար վերլուծենք ծախսերն ըստ գործառնական դասակարգման.

-Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ

2024թ. համայնքային բյուջեում ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ ոլորտի ծախսերը կազմել են 523315,8 հազար դրամ, որը կազմում է ամբողջ ծախսերի 16,4 %-ը:

-Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն

Հաշվետու տարում հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն ոլորտի համար նախատեսվել է ծախսել 1500,0 հազար դրամ, սակայն ֆինանսավորում չի կատարվել:

-Տնտեսական հարաբերություններ

Հաշվետու տարում ընդհանուր ծախսերի 22,7%-ը ուղղվել է համայնքում տնտեսական հարաբերությունների կարգավորմանը: Այս ոլորտում ներառված ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը նախատեսված 444321,1 հազար դրամի դիմաց կազմել է 222398,4 հազար դրամ՝ կատարվելով 50,1%-ով: 723802,3 հազար դրամ ուղղվել է Հրազդան համայնքում ճանապարհների կապիտալ հիմնանորոգման և ընթացիկ նորոգման աշխատանքներին:

- Շրջակա միջավայրի պաշտպանություն

2024թ. շրջակա միջավայրի պաշտպանության համար համայնքի բյուջեից հատկացվել է 379852,2 հազար դրամ, որը հատկացվել է «Մաքուր Հրազդան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը և «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում» բյուջետային հիմնարկին: Շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտին է հատկացվել ընդհանուր ծախսերի 11,9%-ը:

-Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայության ոլորտին համայնքի 2024թ. բյուջեից հատկացվել է 165194,4 հազար դրամ՝ 5,2%, որից 76620,6 հազար դրամը հատկացվել է «Հրազդանքաղլույս» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

-Հանգիստ, մշակույթ և կրոն

2024թ. այս ոլորտին է հատկացվել տարեկան ծախսերի 4.9%-ը՝ 156953,8 հազար դրամ: Հանգիստ, մշակույթ և կրոն ոլորտին հատկացված միջոցներից 142324,2 հազար դրամ հատկացվել է «Հրազդանի դրամատիկական թատրոն-մշակութային կենտրոն», «Հրազդանի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին:

-Կրթություն

Կրթության ոլորտին է տրամադրվել բյուջեի միջոցների 37,7%-ը՝ 1199916,2 հազար դրամ: Համայնքում գործող 6 մանկապարտեզների կապիտալ հիմնանորոգման աշխատանքներին է հատկացվել ոլորտի համար նախատեսված գումարի 16,3 %-ը՝ 195620,5 հազար դրամ, որից 100847,8 հազար դրամը՝ համայնքի միջոցների հաշվին, իսկ 94772.7 հազար դրամը պետական բյուջեից ֆինանսավորվող սուբվենցիոն ծրագրերի հաշվին:

Համայնքում գործող 15 նախադպրոցական ուսումնական հաստատությունների պահպանման ծախսերը կազմել են 693588,4 հազար դրամ:

Արտադպրոցական հիմնարկների պահպանմանն է հատկացվել այդ ոլորտի համար նախատեսված գումարից 309007,3 հազար դրամ:

-Սոցիալական պաշտպանություն

2024թ. սոցիալական պաշտպանության ոլորտին է տրամադրվել բյուջեի միջոցների 0,2%-ը, որի հիմնական ուղղությունը բնակչությանը տրամադրվող նպաստներն ու օգնություններն են, որը հաշվետու տարում կազմել է 5950,0 հազար դրամ: Համայնքի ֆոնդային բյուջեի պակասուրդի (դեֆիցիտի) ֆինանսավորման նպատակով վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային բյուջե է հատկացվել 223500,0 հազար դրամ:

Եզրակացություն

Բյուջեի տարեկան կատարման մասին հաշվետվության համար հիմք են հանդիսացել 2024թ. համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ հաշվետվությունը, համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունները՝ գործառնական և տնտեսագիտական դասակարգմամբ, համայնքի բյուջեի հավելուրդի կամ պակասուրդի (դեֆիցիտի) կատարման վերաբերյալ հաշվետվությունը և համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունների կամ պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների հաշվետվությունները:

Մեր կարծիքով վերոնշյալ հաշվետվությունները կազմված են «Բյուջետային համակարգի մասին», «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքների, ֆիանանսների և էկոնոմիկայի նախարարի 9 հունվարի 2007 թ. N 5-Ն հրամանի պահանջներին համապատասխան և բոլոր առումներով տալիս են ճշմարիտ և իրական պատկեր 2024թ. եկամուտների և ծախսերի վերաբերյալ: